Տ. ՉԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԿՐԿՆԱՁԱՏԿԻ ՏՈՆԻՆ ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 ապրիլի, 2022 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան»
(Յովհ. Ա. 4)։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Ամենքիդ սրտանց ողջունում եմ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» հաղթական ավետիսով՝ աղոթելով եւ մաղթելով, որ հարուցյալ Քրիստոս անսասան պահի հայոց պետականությունը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ աշխարհասփյուռ հայությանը՝ պարգեւելով կամք եւ համբերություն, ուժ եւ կորով, նորանոր հաղթանակներ ու ձեռքբերումներ։ Այս օրերին մեր սրտերն ու հոգիները լցված են անսահման հույսով եւ հավատով, քանզի մեր Տերն ու Փրկիչը հաղթեց մահին, չարչարանքներին. խաչելությանը հաջորդեց հրաշափառ հարությունը, որը գրավականն է քրիստոնյաներիս փրկության եւ մի օր Տիրոջ նման մեր իսկ հարության՝ հավիտենապես Աստծու ներկայության մեջ ապրելու եւ վայելելու հավիտենական կյանքը։ Որտեղ հարությունն է, այնտեղ կյանքը եւ հաղթանակն են։ Հետեւաբար մենք՝ քրիստոնյաներս, միշտ պետք է հիշենք մի պարզ ճշմարտություն, որ հաղթանակած եւ հարուցյալ Տիրոջ զավակներն ենք եւ իրավունք չունենք վախենալու, ընկճվելու կամ հուսահատվելու։ Ինչպես մեր Տերը հաղթեց, այնպես էլ մենք կարող ենք այս կյանքում հաղթանակներ ունենալ, եթե անվերապահ վստահենք Նրան։

Քրիստոսի հարության իրականությունը հիմքն է Եկեղեցու եւ նրա ծիսական կյանքի։ Այս ուրախ լուրը դարեր շարունակ գոտեպնդում եւ քաջալերում է քրիստոնյաներիս՝ կյանքի մեջ խորհուրդ տեսնելու եւ չվախենալու դժվարություններից, խոչընդոտներից ու սատանայի լարած որոգայթներից։ Առանց հարության հավատքի, սիրելինե՛ր, քրիստոնեություն

չկա։ Մեկը չի կարող իրեն քրիստոնյա համարել, եթե չի հավատում Տիրոջ հարությանը։ «Եթե Քրիստոս հարություն չի առել, ապա իզուր է մեր քարոզությունը, իզուր է եւ ձեր հավատը»,— պնդում է քրիստոնեության մունետիկ Ս. Պողոս առաքյալը (Ա. Կորնթ. ԺԵ. 14)։ Այս ուրախ լուրը թեւածում է մեր եկեղեցիներում, վերածնվում մեր սրտերում, վերջին շրջանում ամենքիս պատած տխրությունը եւ թախիծը փարատում՝ ապրելու եւ ապրեցնելու հույս տալով։ Ուրեմն Քրիստոսի հարությամբ գոտեպնդված՝ պետք է վերանորոգենք մեր կյանքը, Աստծուն եւ Նրա կենդանարար պատվիրանները դարձնենք մեր մտածողության հիմքը եւ կենսակերպի անբաժանելի մասը, դառնանք Տիրոջ վկաներն այս աշխարհում, որպեսզի Աստված մեզ բազում հաղթանակներ շնորհի եւ օրհնի։

Այսօր առաջին կիրակին է Ս. Զատկից հետո, որը մեր «Տոնացույց»-ում կոչվում է նաեւ «Կրկնազատիկ» կամ «Նոր կիրակի», քանզի Քրիստոսի հարությամբ ամեն ինչ նոր դարձավ, մեր կյանքը վերաիմաստավորվեց։ Այն կյանքի վերանորոգության, մեղքերից ձերբազատվելու եւ Քրիստոսով նոր մարդ լինելու խորհուրդն ունի։ Ինչպես գարնանն արթնանում է բնությունը, ծառերը ծաղկում են, թռչունները՝ ծլվլում, արեւը՝ ավելի ջերմացնում, մարդիկ՝ աշխուժանում եւ նոր ծրագրեր կազմում, այնպես էլ Տիրոջ հարությունից հետո այս կիրակին հորդորում է մեզ հարության հավատով վերանորոգվել, կյանքի հին ընթացքը մի կողմ դնել եւ այսուհետ ապրել իբրեւ նոր արարած. «Հեռո՛ւ վանեք ձեզնից հին մարդուն, որ ապականվում է խաբուսիկ ցանկություններով՝ համաձայն իր նախկին ապրելակերպի, նորոգվե՛ք ձեր հոգով ու մտածելակերպով, դարձե՛ք նոր մարդ, որ ստեղծված է ըստ Աստծու պատկերի, ապրե՛ք արդարությամբ, սրբությամբ ու ճշմարտությամբ» (Եփես. Դ. 22–24)։ Չպետք է մոռանալ, որ առաքյալների կյանքի վերանորոգությունն սկսվեց հենց Տիրոջ հարության իրողությունը գիտակցելուց հետո, փարատվեցին նրանց վախերը, Հոգեգալստին զորացան Ս. Հոգով եւ առավել ամրացան իրենց հավատի մեջ։ Ո՞վ գիտե, գուցե այստեղ հավաքվածներիս կյանքն էլ հենց այս պահից սկսի վերանորոգության ուղին....

Հաղթանակա՛ծ Աստծու զավակներ, քիչ առաջ այս Ս. Խորանից հնչեց Աստծու խոսքը, եւ ընթերցվեց Հովհաննեսի Ավետարանի Ա. գլուխը, որի հենց սկզբից աստվածաբան առաքյալը հռչակում է Քրիստոսի՝ Աստված եւ ճշմարիտ Լույս լինելը։ Ավետարանիչն ի լուր ամենքի նաեւ հայտարարում է. «Կյանքը Նրանով էր, եւ այդ կյանքը մարդկանց համար լույս էր»։

Ինչ կյանքի մասին է խոսում Ս. Ավետարանը, եւ ո՞րն է իրական կյանքը։ Այս հարցերը մարդուն հուզում են ծնված օրվանից եւ շարունակվում ողջ կյանքի ընթացքում՝ առավել սաստկանալով ծերության ժամանակ եւ հատկապես մահվան մահճում, երբ զգում ենք մեր անզորությունն ու մարդկային տկարությունը։ Սրանց ավելանում է նաեւ մեկ այլ կարեւոր հարց՝ մի՞թե սա վերջն է....

Քրիստոնյաներիս համար մեր հարցերի պատասխանները Ս. Գրքում են, իսկ կենդանի օրինակը՝ հավատքի զորագլուխ Տեր Հիսուս։ Աստծու խոսքը մեզ հստակ ասում է, որ Քրիստոսով է իրական կյանքը, Տերն է լուսավորում եւ իմաստ հաղորդում մեր կյանքին։ Ուրեմն կա մի կյանք, որ տարբերվում է կյանքի մասին շատերիս պատկերացումներից։

Կյանքն Աստծուց մարդուն տրված մեծագույն շնորհն է, որը պետք է գնահատել, արժեւորել եւ իմաստավորել, այլ խոսքով՝ կյանքի ամեն մի ակնթարթն անցկացնել բովանդակությամբ լի։ Բայց կյանքը նաեւ պատասխանատվություն է, ուստի չի կարելի հենց այնպես ապրել, ժամանակը պարզապես վատնել, անտարբեր եւ անհաղորդ լինել, բովանդակության բացակայությունը դարձնել նույն կյանքի անբաժանելի մասը։ Քրիստոնյայի համար խոտելի եւ կրավորական են նման կեցվածքն ու պահվածքը։ Ուստի ամեն գիշեր՝ քնելուց առաջ, մեզ հարց պետք է տանք՝ ինչ արեցինք այսօր, ինչո՞վ իմաստավորեցինք մեր օրը, այն մեզ ավելի մոտեցրե՞ց Աստծուն, թե՞ հեռացրեց։ Ուղղափառ մտածողության համաձայն՝ կարեւոր չէ ապրած տարիների քանակը. կարող ենք ապրել 100 կամ 1000 տարի, բայց առանց Աստծու։ Միաժամանակ կարող ենք ապրել մեկ օր, բայց Աստծու հետ։ Այլ խոսքով՝ Հիսուսով է մեր կյանքն իմաստավորված, իսկ մահը՝ պարտված։ Քրիստոս Աստծուն հավատացողը վստահությամբ լի է ոչ միայն այս աշխարհում, այլեւ հանդերձյալում։ Եթե Նրան, Ս. Թովմաս առաքյալի նման, որպես Տեր եւ Աստված ընդունենք եւ խոստովանենք, ապա Նա կլուսավորի մեր կյանքի ընթացքը եւ այն օրհնաբեր կդարձնի։

Հիսուսով կյանքը հավիտենականն է, անժամանակը, այլ ոչ թե ժամանակավորը։ Իսկ Նրա բերած լույսն անմար է, որ ցրում է համատարած խավարն ու մեզ օգնում հաղթահարել կյանքի բոլոր դժվարությունները։ Մենք՝ Աստծու պատկերով եւ նմանությամբ արարածներս, չենք ստեղծվել ինչ-որ ժամանակահատվածում ապրելու համար, այլ հավիտենականության եւ Աստծու մշտամնա ներկայության մեջ, քանզի կոչումով

երկնաքաղաքացի ենք։ Այս գիտակցությամբ պետք է ապրենք եւ գործենք. չէ՞ որ մեր Տերն ասում է. «Ես եկա, որպեսզի կյանք ունենաք եւ առավել եւս ունենաք» (Հովհ. Ժ. 10)։ Ընտրությունը կրկին մերն է, իսկ վերջնական խոսքը՝ Աստծունը։

*Ինչքա՜ն ենք նյութական դարձել, սիրելի՛ հավատացյալներ, նյութի պաշտամունքը մեզ հեռացրել է իրական արժեքներից, հաճախ կտրել մեր ընկերներից ու բարեկամներից. այդպես էլ չենք կարողանում գլխավորն ու երկրորդականը զանազանել։ Ամբարած նյութական հարստությունը, կյանքի շքեղություններն ու շվայտությունները մեզ փրկության չեն առաջնորդում, այլ նյութի ճիշտ օգտագործումը, ապաշխարության ոգով եւ Հիսուսով կյանքը։ Շատերն ամբողջ օրը «հեռախոսի մեջ» են, կարծեցյալը (*virtual*) գերադասում են իրականին, այնինչ աստվածապարգեւ կյանքը պետք է ապրել, զգալ, վայելել Աստծու սերն ու քաղցրությունը։ Եկեք այս պահին հարց տանք մեզ՝ օրվա ընթացքում քանի՞ անգամ ենք Աստծուն հիշում, Նրան փառք տալիս, շնորհակալություն հայտնում պարգեւած օրվա եւ կյանքի համար։ Ուրեմն Քրիստոսով ապրել նշանակում է հավիտենապես ապրել, հաղթանակներ ունենալ այս կյանքում, ոչնչից չվախենալ եւ ամուր պահել հավատարմությունն Աստծու հանդեպ։ Ի վերջո պետք է հասկանանք, որ Աստծուց հեռանալն է մեզ բազմաթիվ փորձությունների առաջ կանգնեցնում։ Հավատարիմ լինենք Աստծուն, Նրա մատնանշած ճանապարհով ընթանանք, որպեսզի մեր կյանքի ընթացքն էլ լինի անշեղ եւ անկասելի։*

Այսօր նաեւ լռության, ոգեկոչման եւ ինքնաանդրադարձի օր է, երբ փորձում ենք մեր բազում ինչուների եւ եթեների պատասխաններն ստանալ՝ հայցելով Հայոց ցեղասպանության բյուրավոր սուրբ նահատակների բարեխոսությունը։ Մեկ դարից ավելի է անցել այդ ժամանակից, բայց արդյոք մենք հասկացել ենք կատարվածը, դրա պատճառները, գոնե մեր ապագայի համար դասեր քաղել ենք.... 107 տարի առաջ մենք կորցրեցինք ոչ միայն մեր հայրենիքի զգալի մասը, այլեւ անհետ կորան բազում սրբություններ, ավանդություններ, ոչնչացվեց հոգեւոր-մշակութային ահռելի ժառանգություն, Էրզրում *մնացին մեր սրբերի եւ մեծերի գերեզմանները։ Ինչ-որ առումով խզվել է կապը մեր եւ մեր նախնիների միջեւ, որոնցից շատերը նահատակվեցին՝ չուրանալով Քրիստոսին, իրենց զավակների փոխարեն մատյաններ փրկելով ու այդպիսով երբեք չհաշտվելով հայրենի հողի կորստի հետ։ Արցախյան առաջին պատերազմը շտկեց*

մեր մեջքը Հայոց ցեղասպանությունից հետո, երբ իրական հաղթանակի բերկրանքը նոր իմաստ տվեց հայի կյանքին՝ առավել ապրելու եւ արարելու, զորացնելու հայոց պետականությունը եւ միասնաբար մեր երազած հայրենիքն ստեղծելու։

Այս օրերին ինձ համար շատ դժվար է խոսել ապրիլ 24-ի խորհրդի մասին, երբ ունենք նույն Հայրենիքի՝ Արցախի մի մասի կորուստ, տեղահանված հայրենակիցներ, անորոշ ապագա եւ երկրի առաջ ծառացած լուրջ մարտահրավերներ։ Զարմացած եմ մեր որոշ ազգակիցների մտածողության եւ հաշտվողականության վրա. ինչպե՞ս կարող է ցեղասպանություն տեսած ազգը կրկին նույն սխալները գործել եւ սին պատրանքների մեջ ընկնել։ Այդպես էլ չհասկացանք, որ մեր ուժը համընդհանուր միասնության, հայոց պետականության ամրապնդման, հայոց բանակի զորացման եւ հույսը միայն մեզ վրա դնելու մեջ է։ Մեր հայրենիքը սուրբ է եւ նվիրական, քանզի այս հողի վրա իրենց թանկագին արյունն են հեղել մեր նահատակները, զինվորներն ու հրամանատարները։ Կարծես թե կորցրել ենք հայրենի հողի զորության զգացողությունը, մինչդեռ մեր նախնիներն ուժ էին ստանում նույն հողից, մեր էպոսի հերոսները նույնպես զորանում էին հայրենի հողով եւ ջրով։ Հետեւաբար մեր սուրբ նահատակների անմահ հիշատակի հանդեպ հարգանքի լավագույն դրսեւորումը հզոր, արդար եւ մեր երազած հայրենիքի ստեղծումն է, ուր իրեն երջանիկ եւ ամբողջական կզգա ամեն հայ։ Ինչքան զորեղ լինի Հայաստան աշխարհը, այնքան հայաշունչ կլինի նաեւ սփյուռքահայությունը՝ սնվելով, զորանալով հայրենիքով եւ պահելով ազգային-քրիստոնեական իր ինքնությունը։

Տարիներ առաջ մեզ դավանակից Ասորի Եկեղեցու հոգեւորականներից մեկը զրույցի ժամանակ ինձ երանի տվեց եւ ասաց. «Հա՛յր սուրբ, երջանիկ եւ բախտավոր ազգ եք, քանզի հայրենիք եւ պետականություն ունեք»։ Ուրեմն մենք՝ այս սուրբ հողից սնվածներս, պիտի փայփայենք մեր պետականությունը, ամեն մեկս մեր տեղում պետք է ամեն ինչ անենք՝ ամրացնելու պետականության հիմքերը, շատ՝ ամեն օր եւ անդադար պետք է աղոթենք, որ անսասան մնա մեր պետականությունը, եւ Տիրոջից իմաստություն խնդրենք ղեկավար այրերի համար։ Քրիստոսի հարությամբ տոգորված՝ Ե՛ւ հոգեւորականներս, Ե՛ւ աշխարհականներդ պարտք ունենք մեր Հայրենիքի, մեր սուրբ նահատակների անմար հիշատակի առջեւ, այլապես սերունդները մեզ չեն ների։

Այդ հայրենիքի հանդեպ անմնացորդ սիրով են ապրել նաեւ ջուղահայերը՝ երբեք չմոռանալով իրենց բնօրրանի եւ հոգու ծննդավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասին։ Այսօր ամենքս ուխտավորաբար այս աղոթաբույր եկեղեցին ենք եկել՝ նախեւառաջ խնդրելու Ս. Գեւորգ զորավարի բարեխոսությունն ամենքիս համար, համբուրելու Շուրիշկանի հրաշագործ Ավետարանն ու զորանալու։ Այդ համբույրն անիմաստ կլինի, եթե մենք Ավետարանի ընթերցանությունը չդարձնենք մեր առօրյայի մաս, եթե չապրենք ավետարանական պատգամներով։ Մեր հայրերն ամեն օր էին Ս. Գիրք կարդում, դրա համար էլ ավելի զորավոր էին, իսկ նրանց աղոթքները՝ լսելի։

Թող հարուցյալ մեր Տերը բազում հաղթանակներ պարգեւի ամենքիս, լսի մեր աղոթքների ձայնն ու խնդրանքները, ապահով պահի Հայոց աշխարհը եւ այսօրվա մեր ուխտն ընդունելի դարձնի։